78-82 ԿԵՏԵՐԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՕԳՏՎՈՂ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

1-ին /ապրիլի 15-ից մայիսի 10-ը/ և 2-րդ /հունիսի 26-ից հուլիսի 1-ը/ փուլերով հայտը լրացնելիս **89-92 կետերից** օգտվող դիմորդները նեքոնշյալ փաստաթղթերի բնօրինակների սքանավորված էլեկտրոնային տարբերակները պետք է ուղարկեն **vahan.aghababyan@ysu.am** էլեկտրոնային փոստին՝ նշելով **անունը, ազգանունը, հայրանունը, և մասնագիտությունը**, իսկ **օգոստոսի 25-ից օգոստոսի 27-ը** անհրաժեշտ է նշված փաստաթղթերի բնօրինակները և պատճենի 1 օրինակ ներկայացնել մասնաճյուղ: Հակառակ դեպքում դիմորդները չեն կարող օգտվել արտոնությունից:

<u>ԿԵՏ 78</u>

Ընդունելության քննությունը դրական միավորով հանձնելու դեպքում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին մրցույթից դուրս ընդունվում են ժամկետային պարտադիր զինվորական ծառայության ժամանակ ծառայողական պարտականությունները կատարելիս 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամության կամ ֆունկցիոնալության ծանր կամ խորը աստիճանի սահմանափակում ունեցող զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողները, ինչպես նաև զոհված (մահացած) զինծառայողների ծնողները, ամուսինը (կինը), մինչև 27 տարեկան զավակները՝ համաձայն Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության, Հայաստանի Հանրապետության ոստիկանության և Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության տված տեղեկանքների:

- **Տեղեկանք զինծառայող ծնողի զոհվելու մասին** (բնօրինակը և պատճենը՝ 1 օրինակից)

  Ծնողի մահվան վկայականը (բնօրինակը և պատճենը՝ 1 օրինակից)

  Դիմորդի ծննդյան վկայականը (բնօրինակը և պատճենը՝ 1 օրինակից)
- **Զինհաշմանդամ դիմորդի 1-ին կամ 2-րդ կարգը հավաստող փաստաթուղթը** (բնօրինակը և պատճենը՝ 1 օրինակից)

Զինհաշմանդամ դիմորդի անձնագիրը (բնօրինակը և պատճենը՝ 1 օրինակից)

ԿԵՏ 79

Վճարովի համակարգի համար առնվազն անցումային միավորներ հավաքելու դեպքում անվճար ուսուցման համակարգ են ընդունվում՝

1) 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամություն ունեցող անձինք և մինչև 18 տարեկան հաշմանդամ երեխաները կամ ֆունկցիոնալության ծանր և խորը աստիճանի սահմանափակում ունեցող անձինք (երեխաները).

2) առանց ծնողական խնամքի մնացած՝ մինչև 23 տարեկան երեխաները։

ԿԵՏ 79 - 1)

Անձնագիրը և ծննդյան վկայականը (բնօրինակը և պատճենը՝ 1 օրինակից)

Տեղեկանք 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամ, կամ մինչև 18 տարեկան մանկուց հաշմանդամ լինելու մասին (բնօրինակը և պատճենը՝ 1 օրինակից)

ԿԵՏ 79 - 2)

Անձնագիրը և ծննդյան վկայականը (բնօրինակը և պատճենը՝ 1 օրինակից)

Առանց ծնողական խնամքի մնալու մասին հաստատող փաստաթղթերը (բնօրինակը և պատճենը՝ 1 օրինակից)

ԿԵՏ 80

Մարտական հերթապահություն իրականացնող զորամասերում պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած և զորացրված դիմորդները՝ զորացրվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում անվճար ուսուցման մրցույթին մասնակցում են ընդհանուր հիմունքներով, իսկ վճարովի ուսուցման համակարգ ընդունվում են մրցույթից դուրս։

Զինվորական գրքույկ (բնօրինակը և պատճենը՝ 1 օրինակից /բոլոր այն էջերը, որտեղ գրառումներ կան արված/)

ԿԵՏ 81

Առանց ընդունելության քննության Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հատկացված պահուստային տեղերի հաշվին բուհ են ընդունվում Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 451-Ն որոշման հավելվածի 7-րդ կետով սահմանված դեպքերում, Ժառուտիկովյան, Մենդելեևյան, մեգապոլիսների, Կիրառական կենսաբանության միջազգային օլիմպիադաների անհատական մրցանակակիրները, ինչպես նաև տարբեր մարզաձևերի

գծով աշխարհի, Եվրոպայի առաջնությունների, օլիմպիական խաղերի մեդալակիրները՝ մրցանակը ստանալուց հետո երեք տարվա ընթացքում՝ ընդունելության դիմում-հայտում համապատասխան (առարկայական) մասնագիտություններ հայտագրելու դեպքում:

ԺԱՌԻՏԻԿՈՎՅԱՆ, ՄԵՆԴԵԼԵԵՎՅԱՆ ԵՎ ՄԵԳԱՊՈԼԻՄՆԵՐԻ միջազգային օլիմպիադայի հաղթողի դիպլոմ (բնօրինակը և պատճենը՝ 1 օրինակից):

<u>ԿԵՏ 82</u>

1-ին, 2-րդ և 3-րդ խմբերի հաշմանդամություն ունեցող անձինք և հաշմանդամություն ունեցող երեխաները կամ ֆունկցիոնալության միջին, ծանր և խորը աստիճանի սահմանափակում ունեցող անձինք (երեխաները) վճարովի համակարգի համար առնվազն անցումային միավորներ հավաքելու և այլ հավասար պայմանների դեպքում օգտվում են բուհ ընդունվելու նախապատվության (առաջնահերթության) իրավունքից: